




«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
 Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
 E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

ՀՔ-16-12/03

14.01.2017թ.



Հարգելի՛ պրն. Գյոզայան

«Հետք» էլեկտրոնային թերթը մի քանի մարզերում ուսումնասիրել է 2006-2015թթ. դպրոցաշինության ծրագրերը, այդ թվում նաև Արագածոտնի մարզում կատարված աշխատանքները: Առանձին հրապարակումներով «Հետքն» անդրադարձել է նաև Արագածոտնի մարզի Վարդենիս գյուղի դպրոցի վթարային լինելու և երեխաների կյանքին ու առողջությանն անմիջական սպառնալիք հանդիսանալու խնդրին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Արագածոտնի մարզի դպրոցներում կատարված շինարարական աշխատանքները երբևէ ուսումնասիրվել են մարզպետարանի կողմից: Եթե այո, ապա հայտնաբերվել են թերություններ, ի՞նչ քայլեր են ձեռնարկվել:
2. Մարզպետարանը քննարկման առարկա դարձրե՞լ է «Հետքի»՝ Արագածոտնի մարզի դպրոցների վերաբերյալ հրապարակումը:
3. Ի՞նչ փուլում է Վարդենիս համայնքի համար նոր դպրոց կառուցելու հարցը:

Արագածոտնի դպրոցների մասին պատմող վերջին նյութերը հրապարակվել են 2016թ. նոյեմբերի 1-ին և 3-ին: Դրանք կարող եք գտնել այստեղ՝

<http://hetq.am/arm/news/72280/pulayin-tarberakov-veranorogvats-dprocner-aragatsotni-marz.html/>,

<http://hetq.am/arm/news/72361/aragatsotni-marz-veranorogvats-bayc-veranorogman-kariq-unecox-dprocnery-tesanyut.html>

Վարդենիս գյուղի դպրոցի մասին պատմող նյութերից մեկի հղումն այստեղ է՝
<http://hetq.am/arm/print/11848>

Հարգանքով՝

«Հետաքննող լրագրողներ»
հ/կ նախագահ,
«Հետք» թերթի գլխ. խմբագիր



Է. Բաղդասարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 с. Ashtarak. V.Petrosyan 4. tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

_____ N _____

Ի պատասխան Ձեր 14.01.2017 թ. թիվ ՀԲ-16-12/03 գրության

**<<Հետաքննող լրագրողներ>> ՀԿ նախագահ
<<Հետք>> թերթի գլխավոր խմբագիր
պարոն Է. Բաղդասարյանին**

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ Արագածոտնի մարզում դպրոցաշինության և դպրոցների վերանորոգման խնդիրները մշտապես գտնվում են մարզպետարանի ուշադրության կենտրոնում: Մարզի դպրոցների մեծամասնությունում կատարվել են վերանորոգման կամ հիմնանորոգման աշխատանքներ: Աշխատանքները կատարվել են ունեցած ֆինանսական հնարավորությունների սահմաններում՝ ըստ վերանորոգման կարիք ունեցող դպրոցների առաջնահերթության: Հիմնանորոգման աշխատանքները հիմնականում կատարվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ, իսկ մարզպետարանի պատվիրատվությամբ՝ ինչքան ֆինանսական հնարավորությունն է թույլ տալիս՝ դրան համապատասխան կազմվել են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, ըստ որի և կատարվել են վերանորոգման աշխատանքները:

Դպրոցներում մեր կողմից կատարված ուսումնասիրություններից և դպրոցների տնօրինությունից տեղեկացված ենք վերանորոգման աշխատանքներից հետո ի հայտ եկած թերությունների մասին:

Մարզպետարանում քննարկվել է <<Հետք>> էլեկտրոնային թերթում դպրոցաշինության ծրագրով մեր մարզում կատարված աշխատանքների վերաբերյալ հրապարակումը: Տեղեկացնում ենք Ձեզ, որ նշված թերությունների մի մասը հետևանք են դպրոցական շենքերի տեղակայման գեոլոգիական պայմանների: Այդ և մնացած թերությունների վերացմանը մարզպետարանը նախատեսում է անդրադառնալ՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ Վարդենիս համայնքի նոր դպրոցի ուսումնական մասնաշենքը արդեն հանձնվել է շահագործման և այնտեղ են ընթանում ուսումնական դասապրոցեսները:

Հարգանքով՝



Գ.ԳՅՈՂԱԼՅԱՆ

Կատարող՝ Ա. Դավայան
Հեռ. 0232 3-37-74